Քրիստոնյա Հայաստան

2021, ՍԵՊՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 17 (589)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՕՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

7 սեպտեմբերի **ՀՀ-ում Գերմանիայի դեսպանին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում իր դիվանագիտական առաքելությունն ավարտած Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Միխայել Բանցհաֆին:

Հանդիպմանը Նորին Սրբությունը, խոսելով հայ ժողովրդի առջեւ ծառացած արտաքին եւ ներքին մարտահրավերների մասին, իր երախտագիտությունը հայտնեց Գերմանիայի իշխանություններին՝ Հայաստանին այս ծանր ժամանակաշրջանում աջակցելու համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ շնորհակալություն հայտնեց դեսպանին՝ Հայաստանում իրականացրած արդյունավետ առաքելության համար:

Իր հերթին՝ դեսպանը գոհունակությամբ նշեց, որ իր պաշտոնավարման ընթացքում առիթ է ունեցել ճանաչելու հայ ժողովրդի բազմադարյա հարուստ մշակույթը եւ հաղորդ դառնալու Հայաստանի պատմական ու հոգեւոր արժեքներին:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատման կարեւորությանը եւ այդ գործում ԵԱՀԿ Մինսկի խմբի դերակատարությանը:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը դեսպանին մաղթեց նորանոր հաջողություններ իր հետագա գործունեության մեջ:

8 սեպտեմբերի **ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոնաթան Լաքոտին:

Ողջունելով դեսպանին՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ վերջինիս արդյունավետ պաշտոնավարման ընթացքում առավել ընդգծվեցին հայ-ֆրանսիական բարեկամական կապերը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի դեմս դեսպան Ջոնաթան Լաքոտի, իր երախտագիտությունը հայտնեց Ֆրանսիայի իշխանություններին՝ համավարակի ընթացքում, ինչպես նաեւ պատերազմի ու հետպատերազմյա ծանր օրերին Հայաստանին եւ հայ ժողովրդին բերած աջակցության եւ զորակցության համար:

Հանդիպմանը Նորին Սրբությունը նաեւ հույս հայտնեց, որ Ֆրանսիան՝ իբրեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր, իր նպաստը կբերի Լեռնային Ղարաբաղի խնդրի արդարացի կարգավորման գործում:

Իր հերթին՝ դեսպան Ջոնաթան Լաքոտը ջերմ ընդունելության համար երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին եւ ընդգծեց, որ իր առաքելությունը Ֆրանսիայի եւ Հայաստանի միջեւ ձեւավորված բարեկամական հարաբերությունների պահպանումն ու շարունակական ընթացքի ապահովումն են:

Զրույցի ընթացքում դեսպանն արձանագրեց նաեւ, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն առաջացրել է բազմաթիվ հարցեր, որոնք դեռեւս չեն արժանացել միջազգային հանրության պատշաճ ուշադրությանն ու գնահատանքին: Այս առնչությամբ դեսպան Ջոնաթան Լաքոտը հավաստիացրեց Նորին Սրբությանը, որ Ֆրանսիան շարունակելու է ջանքեր գործադրել խնդրի արդար եւ խաղաղ կարգավորման համար:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը դեսպանին մաղթեց նորանոր հաջողություններ իր հետագա գործունեության մեջ:

Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Զոհուրիին:



Վեհափառ Հայրապետը ողջունեց դեսպանի այցը Մայր Աթոռ եւ իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց նրան:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհակալություն հայտնեց Իրանի Իսլամական Հանրապետությանը՝ համավարակի, պատերազմի եւ հետպատերազմյա դժվարին ժամանակաշրջանում Հայաստանին մշտապես զորակցություն ցուցաբերելու համար:

Նորին Սրբությունը կարեւորեց երկու ժողովուրդների բազմադարյա բարեկամական կապը՝ հույս հայտնելով, որ ապագայում այն առավել կխորանա ու կսերտանա:

Իսկ դեսպան Աբբաս Բադախշան Զոհուրին, անդրադարձ կատարելով տարածաշրջանային իրավիճակին, ընդգծեց հակամարտությունների խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը: Դեսպանը նաեւ նշեց, որ Իրանի համար շատ կարեւոր է հզոր եւ տնտեսապես զարգացած հարեւան ունենալը՝ նկատի առնելով Հայաստանը:

Հանդիպմանը զրուցակիցներն անդրադարձան նաեւ Մայր Աթոռի եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ առկա փոխգործակցային հարաբերություններին՝ կարեւորելով մշակույթի ոլորտում համագործակցությունը, կրոնական երկխոսությունը, միջկրոնական համաժողովների կազմակերպումը:

10 սեպտեմբերի **Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանին՝ ուղեկցությամբ Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի:

Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց նախարարին՝ Մայր Աթոռում տեղի ունեցող միջազգային համաժողովին իր մասնակցությունը բերելու համար, որով հնարավորություն ընձեռվեց ժողովականներին համապարփակ ներկայացնելու Արցախի առջեւ ծառացած ներկայիս մարտահրավերները եւ հիմնախնդիրները: Վեհափառ Հայրապետը տեղեկացրեց նախարարին, որ այս շրջանում քույր եկեղեցիների ներկայացուցիչները եւս համապատասխան աշխատանքներ են իրականացրել՝ միջազգային ատյաններում բարձրաձայնելու Ադրբեջանի ոտնձգությունները Արցախի եւ Հայաստանի Հանրապետության դեմ: ➥ *էջ 2*

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց

Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարին

➥ էջ 1

Հանդիպմանը Նորին Սրբությունը նշեց նաեւ, որ եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղարին եւ Եվրոպական եկեղեցիների համաժողովի նախագահին տեղեկացվել է Մայր Աթոռի կողմից Արցախի հոգեւոր-մշակութային արժեքների պահպանման գործում իրականացվող աշխատանքների մասին:

Նախարար պարոն Դավիթ Բաբայանն իր խոսքում ընդգծեց, որ Արցախը մշտապես զգացել է Հայ Առաքելական Ս. Եկեղեցու աջակցությունը եւ մեծապես կարեւորել ու գնահատել այն: Վերջինս նաեւ ընդգծեց նման համաժողովների կազմակերպման կարեւորությունը, որոնց միջոցով հնարավոր է Արցախն առավել ճանաչելի դարձնել միջազգային տարբեր հարթակներում:

«Բարնաբաս» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Բարնաբաս» միջազգային հիմնադրամի տնօրեն քորեպիսկոպոս Պատրիկ Սուքդեոյին, տիկին Ռոզմարի Սուքդեոյին, հիմնադրամի ծրագրերի պատասխանատու Քարոլին Քըրսլեյքին եւ հիմնադրամի Սանկտ Պետերբուրգի ներկայացուցիչ Բորիս Կոստինին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հիմնադրամի ներկայացուցիչներին, ընդգծեց, որ նրանց մասնակցությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում անցկացվող «Միջազգային կրոնական ազատություն եւ խաղաղություն» խորագրով միջազգային համաժողովին եւս մեկ անգամ վկայում է վերջիններիս բարեսեր վերաբերմունքը Արցախի եւ հայ ժողովրդի նկատմամբ հատկապես այս դժվարին օրերին: Հանդիպմանը Նորին Սրբությունը նաեւ իր երախտագիտությունը հայտնեց «Բարնաբաս» բարեգործական հիմնադրամին՝ տեղահանված արցախցիներին օգնելու եւ Իզմիրլյան ԲԿ-ում 44-օրյա պատերազմում վիրավորում ստացած զինծառայողների բուժման նպատակով վերականգնողական կենտրոնի ստեղծման համար:

Հիմնադրամի տնօրեն քորեպիսկոպոս Պատրիկ Սուքդեոն շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ջերմ ընդունելության համար՝ հաստատելով, որ նմանօրինակ բարեգործական ձեռնարկները շարունակական բնույթ են կրելու՝ ի նպաստ Արցախի եւ Հայաստանի:

Հայ Եկեղեցու «Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ» շքանշան՝ բարոնուհի Քերոլայն Քոքսին

Սեպտեմբերի 10-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ եւ նախկին փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսին:

Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց բարոնուհի Քոքսի՝ Հայաստան այցելության եւ համաժողովին իր մասնակցությունը բերելու համար: Վեհափառ Հայրապետը մեծապես գնահատեց բարոնուհու ներդրած ջանքերը միջազգային տարբեր ատյաններում արցախահայության ազատ եւ անկախ ապրելու իրավունքի պաշտպանության, ինչպես նաեւ Արցախի հայորդիներին մշատպես աջակցություն եւ զորակցություն ցուցաբերելու գործում:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի գնահատումն բարոնուհի Քերոլայն Քոքսի՝ հայ ժողովրդին ու Հայ Եկեղեցուն մատուցած գովարժան ծառայությունների, նրան պարգեւատրեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշանով:

Իր հերթին՝ Քերոլայն Քոքսը խորին շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին՝ նման բարձր պատվի արժանացնելու համար: Բարոնուհին Նորին Սրբությանը հավաստիացրեց, որ միջազգային տարբեր հարթակներում շարունակելու է փաստերի հիման վրա բարձրաձայնել Արցախի հայության եւ հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության նկատմամբ Ադրբեջանի կողմից իրականացվող ոճրագործությունների մասին:

«Միջազգային կրոնական ազատություն եւ խաղաղություն» խորագրով երկօրյա միջազգային համաժողովը Մայր Աթոռում

Սեպտեմբերի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանի հանդիսությունների սրահում, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ նախաձեռնությամբ Մայր Աթոռի քարոզչական կենտրոնի ու Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանման հանձնախմբի, մեկնարկեց «Միջազգային կրոնական ազատություն եւ խաղաղություն» խորագրով երկօրյա միջազգային համաժողովը:



Համաժողովին մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, քույր Եկեղեցիների եւ քրիստոնեական կառույցների ներկայացուցիչներ, գիտնականներ ու հասարակական գործիչներ տարբեր երկրներից:

Կոնֆերանսի սկզբում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության հարցերով հանձնախմբի ատենապետ Վիգեն արք. Այքազյանը ներկաներին հրավիրեց մեկ րոպե լռությամբ հարգելու արցախյան 44-օրյա պատերազմի անմեղ զոհերի հիշատակը: Այնուհետեւ համաժողովի մասնակիցներին իր պատգամն ու օրհնությունը փոխանցեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Համաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

Ուրախ ենք ողջունելու ձեզ հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում եւ բերելու հայրապետական Մեր օրհնությունը «Կրոնական ազատություն եւ խաղաղություն» խորագրով այս համաժողովի անցկացման առթիվ: Գնահատելի են Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գործող Արցախի կրոնամշակութային արժեքների պահպանության բաժնի եւ հանձնախմբի ջանքերը՝ այստեղ մեկտեղելու ազատության ու խաղաղության վեհ գաղափարների համար իրենց ծառայությունն աշխարհում բերող նվիրյալների, որոնց համատեղ ջանքերի համագումարը մեծապես կնպաստի այդ գաղափարների վերարժեւորմանն ու ամրապնդմանը:

Ազատության եւ խաղաղության գաղափարները մարդկության պատմության տարեկիցներն են եւ այսօր էլ շարունակում են մնալ արդիական, մանավանդ երբ աշխարհի տարբեր մասերում բռնությունների, հակամարտությունների, պատերազմների առկայությունը հաճախ փորձ է արվում հիմնավորել ազատության կամ խաղաղության հաստատման կեղծ օրակարգերով: Քրիստոնեական մտածողության համաձայն՝ ազատությունը դրսեւորվում է Բարձրյալի կամքի հետ մարդկային կամքի ներդաշնակությամբ: Այս համոզումով է Պողոս առաքյալը հայտարարում. «Ուր որ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատություն է» (Բ Կորնթ. 3.17): Հիրավի, առանց ազատության եւ խաղաղության գաղափարների վերաբերյալ կրոնական վսեմ ըմբռնումի՝ հնարավոր չէ հասնել մարդկային ազատությունների ու իրավունքների ճշգրիտ ընկալմանն ու իրացմանը:

Աշխարհիկ հասկացողությամբ՝ ազատությունը մեկնաբանվում է որպես անձի կամարտահայտման եւ ազատ գործելու իրավունք՝ այլոց ազատությունների հանդեպ վտանգների ու սահմանափակումների բացառումով: Ազատության գաղափարի ըմբռնումները, ինչպիսի հիմքի վրա էլ կառուցվեն, անվիճարկելիորեն պիտի կոչված լինեն ծառայելու մարդկանց ներդաշնակ ու խաղաղ համակեցության ապահովմանը, սուրբգրային «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. 2.14) պատգամի իրագործմանը: Այս իմաստով ցանկանում ենք բարձրաձայնել Մեր երջանկահիշատակ նախորդներից Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքերը խաղաղության մասին. «Ամեն բանի մասին կարելի է տարակարծիք լինել եւ վիճել. խաղաղության հրամայականը, սակայն, վեր պետք է լինի ամեն վեճից եւ դառնա բոլորի համար մտածելու եւ գործելու գերագույն կանոն:

➥ էջ 4–5

ԱՅՐԻՎԱՆՔ (ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ) ԵՒ ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴ

Սկիզբը՝ թիվ 16

Գեղարդավանքի ժայռափոր կառույցները միջնադարյան հայկական ճարտարապետության գլուխգործոցներ են:

Վանական համալիրն իր գոյության ընթացքում բազմիցս ավերվել է ինչպես արտաքին հարձակումների, այնպես էլ երկրաշարժերի հետեւանքով, ապա վերակառուցվել: Խորհրդային իշխանության տարիներին (1934, 1940 եւ 1960—1961 թթ.) Գեղարդավանքը հիմնավորապես վերանորոգվել է:

1635—1675 թթ. Գեղարդավանքի վանահայրն էր Դավիթ վարդապետ Պռոշյանը, որի օրոք թիֆլիսեցի Սուլէ Չիթախյանը 1655 թ. նորոգել է Կաթողիկեն եւ վանքին նվիրել արծաթե կանթեղ: 1679 թ. հունիսի 4-ի Գառնիի ավերիչ երկրաշարժից Գեղարդավանքն ավերվել է, լեռներից պոկված ու թափված ժայռաբեկորները ծածկել են համալիրի շինությունները: 1684 թ. Գեղարդավանքը մաքրել են փլվածքներից, նորոգել վնասված շինությունները, կառուցել բրգավոր պարիսպը եւ նրան կից բնակելի ու տնտեսական կառույցները: 1687 թ. պատրաստել են սուրբ գեղարդի նոր, արծաթե պահարան՝ կրկնելով հնի արձանագրությունը: Պահարանի դռնակների վերեւում «Ավետման» տեսարանն է, դիմացը՝ հրեշտակը, ներքեւում՝ «Խաչելությունը», դիմացի փեղկին՝ ս. Գրիգոր Ա Լուսավորիչը: Ոսկերիչ-քանդակագործներ Գրիգորը եւ Սարգիսը կերպարներին տվել են ճգնավորի տեսք՝ բնական շարժումներով ու կեցվածքով: 1698 թ. քանաքեռցի ոսկերիչ Ավետը պատրաստել է պահարան՝ Գեղարդավանքում պահվող նոյյան տապանի փայտից: Դռնակներին Հակոբ Մծբնացու եւ նրա դիմաց հրեշտակի քանդակներ են: Գեղարդավանքի վանահայր Դանիել վարդապետ Պռոշյանը 1708 թ. կառուցել է վանքի արեւմտյան կողմի կամարակապ դարպասը: 1715 թ. հայ վաճառականները Գեղարդավանքին են նվիրել եպիսկոպոսական մարգարտաշար թագ: Վանահայր Պետրոս Ջահկեցին 1733—1739 թթ. նոր հողեր է ձեռք բերել վանքի համար: XVIII—XIX դդ. Գեղարդավանքն ունեցել է այգիներ, ջրաղացներ, ձիթհաններ, ընդարձակ կալվածքներ Նորագավիթ, Նորք, Տաճարաբակ (այժմ՝ Ջորաղբյուր) գյուղերում, ստացել Գողթ գյուղի տարեկան բերքի կեսը: 1834 թ. վանքը նորոգել է կաթողիկոս Հովհաննես Ը Կարբեցին: 1840 թ. հուլիսի 2-ի Ակոռիի մեծ երկրաշարժից վնասվել են Գեղարդավանքի Կաթողիկեն եւ խցերը: Նույն տարում վանահայր Օհան վարդապետը վանքի շրջակայքում մրգատու ծառերով մեծ այգի է տնկել: Միքայել Ջամոյան վարդապետը 1868 թ. Գողթ եւ շրջակա մյուս գյուղերից նոր կալվածքներ է գնել եւ շինել վանքի ճանապարհը: Կաթողիկոս Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցու հրամանով վանահայր Ռաֆայել Շիրակացին 1870-ական թթ. կառուցել է Գեղարդավանքի դպրոցը: Կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի հայրապետության տարիներին վանքի բակի արեւելյան կողմում աղբյուր է կառուցվել (1958 թ., ճարտարապետ՝ Ռ. Իսրայելյան), 1960 թ. վերակառուցվել է դարպասը, 1968 թ. համալիրի արեւմտյան հատվածում կառուցվել է վանատան երկհարկանի շենքը, բարեկարգվել վանքի տարածքը: 1978 թ. բացվել է վերակառուցված սեղանատունը, վերանորոգվել են պարսպին կից շինությունները, Կաթողիկեի խորանում տեղադրվել է նոր բեմասեղան (ճարտարապետ՝ Ս. Քյուրքչյան): Պետական միջոցներով նորոգվել է Երեւան—Գառնի—Գեղարդ խճուղին, Գեղարդավանքի վիմափոր կառույցները ներթափանցող ստորգետնյա ջրերից պաշտպանելու համար վանքի հյուսիսային կողմում, նրա ամբողջ երկարությամբ, կառուցվել է ջրահեռացման թունելախորշ, որով հավաքված ջրերը հոսում են եւ թափվում Գողթ գետակը: 1987 թ. ավարտվել է Կաթողիկեի ու գավթի տանիքների՝ բազալտե քարերով սալարկումը: Հիմնադրման օրից Գեղարդավանքի ուխտի օրերը Քրիստոսի պայծառակերպության (Վարդավառ) եւ Աստվածածնի վերափոխման տոներն են:



Գեղարդավանքը 2000 թվականից գրանցված է Միավորված ազգերի կազմակերպության կրթական, գիտական եւ մշակութային կազմակերպության՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի (UNESCO) համաշխարհային ժառանգության ցանկում:

2018 թ. դեկտեմբերի 7-ին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում (Փարիզ) «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1954 թ. կոնվենցիային կից 1999 թ. երկրորդ արձանագրության կոմիտեի 13-րդ նիստի ընթացքում, կոմիտեի անդամները միաձայն որոշում են կայացրել Հայաստանի ներկայացրած «Գեղարդի վանք եւ Ազատ գետի վերին հովիտ» (Monastery of Geghard and the Upper Azat Valley) վայրին, որպես մարդկության համար բացառիկ կարեւորություն ունեցող արժեք, ուժեղացված պաշտպանության կարգավիճակ (Enhanced protection) շնորհելու վերաբերյալ: Այն նպատակ է հետապնդում ապահովելու մարդկության համար առավել մեծ արժեք ներկայացնող հատուկ հուշարձանների լիարժեք եւ արդյունավետ պաշտպանությունը միջազգային կամ ոչ միջազգային զինված հակամարտությունների ժամանակ: «Ուժեղացված պաշտպանությունը» պահանջում է հակամարտող կողմերին ձեռնպահ մնալ նման հուշարձանի վրա հարձակումից, ինչպես նաեւ հուշարձանը կամ նրա անմիջական շրջապատը ռազմական նպատակներով ցանկացած օգտագործումից: Արձանագրությունը նաեւ սահմանում է քրեական պատիժներ՝ ֆիզիկական անձանց կողմից մշակութային արժեքի նկատմամբ ուժեղացված պաշտպանությունը խախտելու պարագայում: «Ուժեղացված պաշտպանության» կարգավիճակ ունեցող ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում այժմ ընդգրկված է մարդկության համար բացառիկ արժեք հանդիսացող մշակութային 17 կոթող:

Այսպիսով՝ «Գեղարդի վանք եւ Ազատ գետի վերին հովիտ» վայրը դարձել է Հայաստանի առաջին մշակութային արժեքը, որին «Ուժեղացված պաշտպանության» կարգավիճակ է շնորհվել:

* * *

Գեղարդավանքը Հայաստանի ամենահայտնի եւ ամենաշատ այցելու ունեցող տեսարժան վայրերից է: Վանական համալիրի դիրքը շատ բանաստեղծական է, տարածքի կլիման՝ առողջարար: Անցյալում Գեղարդավանքը Էջմիածնի միաբանության համար ամառանոցային վայր է եղել: Ինչպես վերը նշեցինք, իր ներկայիս անվանումը վանքն ստացել է ի պատիվ XIII դարում Ս. Էջմիածնից այստեղ բերված եւ մոտ 500 տարի պահված համաքրիստոնեական սրբություններից մեկի՝ աստվածամուխ սուրբ գեղարդի: Բարեպաշտ հավատացյալներն Այրիվանք ուխտի գնալիս ուղղակի ասում էին. «Գնում ենք ս. Գեղարդ՝ ուխտի», կամ՝ «Գնում ենք Գեղարդավանք՝ ուխտի»: Այսպես ժամանակի ընթացքում Այրիվանք անունն իր տեղը զիջեց Գեղարդավանքին: Գեղարդի պատվին անվանակոչվեց ոչ միայն վանքը, այլեւ Գեղամա լեռների մի ճյուղը, որը ձգվում է դեպի հարավ եւ կոչվում Գեղարդասար: Գեղարդասարի կիրճը, որն Ազատ գետի վերին հոսանքի շրջանն է, կոչվում է Գեղարդաձոր: Իսկ ինչ է քրիստոնեական աշխարհի համար սրբություն դարձած այդ գեղարդը: Այն շուրջ 15 սմ երկարությամբ տափակ եռանիստ երկաթյա տեգ է, որը, փայտի ծայրին ամրացվելով, ծառայել է որպես խոցող զենք՝ նիզակ: Հիսուսին խաչելուց հետո հռոմեացի զորականներից մեկը (ըստ ավանդության՝ հարյուրապետ Ղունկիանոսը (Լոնգինուս)), հաստատ համոզվելու համար, որ խաչված Հիսուս Քրիստոսն արդեն մեռած է, Նրա կողը նիզակով խոցեց մինչեւ սիրտը, «իսկույն արյուն եւ ջուր ելավ» (Հովհ. ԺԹ 33—34): Ավանդությունը պատմում է, որ Քրիստոսի վերքից կաթող ջրի ու արյան խառնուրդից ցայտել է Ղունկիանոսի հիվանդ աչքերին եւ բուժել՝ վերականգնելով նրա տեսողությունը: Նա դարձել է քրիստոնյա, քարոզել Մերձավոր Արեւելքում՝ իր հետ ունենալով սուրբ գեղարդը: ➥ *էջ 7*

Զարեհ Որբունու պատմվածքները

Սկիզբը՝ թիվ 8—10, 12—16

Զ.

Որբունու բազմաթիվ պատմվածքներում («Գինով», «Մենութիւն» եւ այլն) սյուժեն զարգանում է ոչ թե գործողությունների հերթագայումով, այլ հերոսի խորհրդածություններով ու մտորումներով: Սյուժետային զարգացումը հիմնվում է գլխավոր կերպարի ապրումների եւ զգացումների վրա: Բնության շնչավորումն առավել ակնհայտորեն է ներկայացնում նրանց հոգեվիճակը: Գործողություններին մասնակից է դառնում ողջ իրականությունը, շնչավորվում են անշունչ առարկաներն ու իրողությունները՝ առավել պատկերավոր ներկայացնելով հերոսի ապրումներն ու զգացումները:

Այսպիսով՝ Զարեհ Որբունու արձակն ունի իր առանձնահատկությունները: Սփյուռքահայ նշանավոր գրող Զարեհ Որբունին գրական մեծ գործունեություն է ծավալել: 20-ական թվականներից եռանդուն մասնակցություն է բերել ֆրանսահայ գրական-մշակութային կյանքին: Պետրոս Զարոյանի հետ կարճ ընթացքում հրատարակել է «Նոր հաւատք» հանդեսը, «Լուսաբաց» ամսաթերթը, աշխատակցել Սփյուռքի առաջադիմական մամուլին՝ հատկապես ֆրանսահայ հանդեսներին ու թերթերին: Որբունին գրել է վեպեր, պատմվածքներ:

Որբունու պատմվածքներն ունեն կառուցվածքային ու թեմատիկ առանձնահատկություններ: Ստեղծագործություններում պատկերվում են հասարակ մարդկանց, հայրենիքից հեռու գտնվող պանդուխտների կյանքի դժվարին օրերը: Հաճախ նրանց գործողությունների փոխարեն ներկայացվում են հերոսների ապրումներն ու մտահոգությունները: Պատմվածքներում հիմնականում հանդես են գալիս դրական հերոսներ, որոնք փորձում են հաղթահարել կյանքի դժվարությունները, հայրենիքի կարոտը, նյութական զրկանքները եւ այլն: Այդ հերոսների կողքին հանդիպում են նաեւ այնպիսիք, որոնց համար մարդկային կյանքն արժեք չի ներկայացնում. նրանք մտահոգված են միայն իրենց նյութապաշտական մղումներով:

Զարեհ Որբունու պատմվածքները ոչ ծավալուն գործեր են: Նշված ստեղծագործություններում երբեմն գործողությունները կատարվում են անսպասելիորեն. սկիզբն ու վերջը չեն կանխորոշվում, կամ էլ անսկզբություն ու անվերջություն է տիրում ստեղծագործության գործողություններում: Մանրի ու մեծի, կարեւորի ու անէականի զանազանում չկա. բոլոր իրողությունները քննվում են զննող հայացքի, միեւնույն լարված ուշադրության, հավասար լույսի տակ: Ստվերներն անկյուններում չեն խտանում, մարդիկ խոսում են այնպես, ինչպես կխոսեին փողոցում, ժողովի ժամանակ եւ այլուր:

Մի շարք պատմվածքներում սոցիալական կեցության խնդիրներին գումարվում են նաեւ սփյուռքահայի կյանքի դժվարությունները: Կեցության խնդրից բացի՝ աշխարհի տարբեր անկյուններում հայտնված հայերն ապրում էին հայրենիքի կարոտով, սրտատրոփ սպասում հայրենիքից եկող լուրերին, ապրում դրանցով, ուրախանում էին՝ իրենց հայրենակիցներին հանդիպելով:

Որբունու պատմվածքներում ընթերցողի առաջ հառնում է սփյուռքահայի տարագիր կյանքը: Հեղինակը, հեռու լինելով հայրենիքից, առավել խտացրած գույներով է պատկերել հայրենիքի նկատմամբ սերն ու կարոտը: Այդ բոլորի մեջ կա ազգային գիծը՝ հայկականը, որն զգալ է տալիս գրողի մտահոգությունն իր ժողովրդի ճակատագրի նկատմամբ:

Գրողի պատմվածքների հերոսներն արդարամիտ ու ազնիվ մարդիկ են: Չնայած կյանքի անարդարություններին ու դաժան օրենքներին՝ նրանք ապրում են ազնիվ ու շիտակ կյանքով՝ հավատարիմ իրենց բարոյական սկզբունքներին: Կյանքի դժվարությունները չեն ստիպում նրանց փոխել կեցության ձեւը: Հաճախ ներքուստ տառապում են, բայց նույնիսկ այդ պարագայում չեն դավաճանում իրենց մարդկային տեսակին: Պատմվածքների սյուժետային առանցքը կազմում են գլխավոր հերոսների կյանքի տխուր պատկերները՝ երազանք, ձգտում, հոգեկան ապրում եւ հուսալքում: Մարդու ներքին ապրումների խոր ընդհանրացումներ են «Հանուն տառապանքին», «Մենութիւն», «Սեւ մազերը», «Գինովը» եւ այլ պատմվածքներ: Որբունին պատմում է ջերմ շնչով, պատմում է ընդհանրապես առաջին դեմքով: Ընթերցողը հավատում է հեղինակին՝ հաճախ տվյալ պատումը համարելով որպես գրողի կյանքի դրվագներից կազմված արտացոլում եւ ապրված էջ:

Գեղարվեստական գրականության նպատակն ընդհանրապես կյանքի պատկերավոր վերարտադրությամբ մարդկային գեղեցիկ իդեալների՝ բարու, արդարության, առաքինության, մարդասիրության, մարդու մեջ մարդկայինի հաստատումն է եւ մերժումն ամենայն չարի, որը խաթարում է մարդու մեջ մարդկայինը, բնականն ու գեղեցիկը: Այս ամենը սփյուռքահայ գրականությունը փորձել է տալ ամենից առաջ տարագիր, անհայրենիք հայության կյանքի պատկերներով: Սփյուռքահայ գրականության գլխավոր թեման եղավ ու մնաց սփյուռքահայության ճակատագրի քննությունը, նրա անցած ու ներկա կյանքի պատմությունը հայրենի հողի վրա, հայրենի օջախում նրա եւ երջանիկ, եւ հոգսաշատ օրերից մինչեւ ջարդ ու աքսորի տաժանելի օրերը, թափառումները երկրե-երկիր, մի կտոր հացի որոնումներն օտար ափերում: Այդ գրականության համատեքստում Զարեհ Որբունու գրականությունն ինքնուրույն տեղ ունի:

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

«Միջազգային կրոնական ազատություն եւ խաղաղություն»

➥ էջ 2

Մեր՝ հոգեւորականներիս առաքելությունը պետք է լինեն մեր հոգու բոլոր ուժերով աղոթելն Աստծուն եւ չտկարացող եռանդով գործելը՝ բարոյական ուժը առավել ու առավել հզորացնելու ուղղությամբ, որպեսզի ազգությունների ու պետությունների միջեւ ստեղծվեն խաղաղարար հարաբերություն-

ներ բոլոր տեսակի հարցերի լուծման ճանապարհի վրա»:

Սիրելիներ, Աստծո օրհնությունը, կյանքի առաջընթացն ու երջանկությունը խաղաղության մեջ են: Խաղաղության մեջ է նաեւ հույսը գալիքի: Քրիստոնյաներիս համար խաղաղության կոչել եւ խաղաղություն հաստատել նշանակում են



վկայել Քրիստոսին: Մեր Տիրոջ ու Փրկչի պատգամն է՝ «Խաղաղութիւն արարէք ընդ միմեանս» (Մարկ. 9.49): Արդարեւ, առ Աստված մեր հավատի դրսեւորումն են խաղաղությանն ուղղված մեր քայլերը, քանզի հավատն ինքը մարդու խաղաղության ուխտն է Աստծո հետ:

Խաղաղությունը կարող է արգասիքներ բերել եւ հարատեւել արդարության գործադրմամբ: Պարտադրված խաղաղությունը, առանց արդարության, բարիքի փոխարեն ցավ ու տառապանք է ծնում, ատելություն ու թշնամանք բերում մարդկային կյանքում: Չնայած ազատության ու խաղաղության անհրաժեշտության համընդհանուր գիտակցումին ու ձգտումին՝ աշխարհում առ այսօր հաղթահարված չեն բռնությունները, պատերազմները, էթնիկ-ազգամիջյան ատելությունը եւ դրանց հիմքի վրա իրագործվող աշխարհավեր ոճրագործությունները: Ավելին՝ այդպիսի գործողությունները շարունակում են իրականացվել արդիական նորագույն գիտատեխնիկական նվաճումների եւ միջոցների օգտագործմամբ:

Անհատի եւ ազգերի ազատության ու խաղաղության նկատմամբ ատելության եւ անհանդուրժողականության դրսեւորումների մարդկությունը բախվել է բազմիցս: Մեր ժողովուրդն իր պատմության ընթացքում եւս կրել է ազատության ոտնահարման եւ էթնիկ ատելության հետեւանքները: Մեր ժողովրդի կյանքում այդպիսի ողբերգական իրադարձություններ տեղի ունեցան 20-րդ դարասկզբին, երբ Օսմանյան կայսրությունում մեկ եւ կես միլիոն հայ զոհ դարձավ Ցեղասպանության, եւ հայ ժողովուրդը մեծագույն կորստի վիշտը կրեց՝ զրկվելով նաեւ իր պատմական հայրենիքից: Մարդկության պատմության առաջին ցեղասպանության հանդեպ անտարբերությունն ու իրավական միջոցների կիրառման հապաղումը բերեցին այլ ցեղասպանությունների եւ մարդկության դեմ հանցագործությունների, որոնց ցավալի հետեւանքներից էին անցյալ դարի կեսերին իրագործված հոլոքոստը, 20-րդ դարավերջում՝ Կամբոջայի, Ռուանդայի, Դարֆուրի ցեղասպանությունները եւ այլն:

Նման ցավալի իրադարձությունների բախվեցինք բոլորովին վերջերս, երբ Արցախում բնակվող մեր ժողովրդի նկատմամբ Ադրբեջանի կողմից լայնածավալ պատերազմ սանձազերծվեց: Ռազմական գործողությունների ընթացքում, որում ներգրավված էին թուրքական զինված ուժեր, միջազգային ահաբեկչական խմբավորումներ, խաղաղ բնակավայրերի եւ ժողովրդի դեմ գործածվեցին ֆոսֆորային եւ արգելված այլ զինատեսակներ: Այդ ողբերգական իրադարձությունների հետեւանքով զոհվեցին ու հաշմանդամ դարձան հազարավոր անձեր, ավերվեցին բնակավայրեր, տասնյակ հազարավոր ընտանիքներ դարձան գաղթականներ, շատերը, ինչպես զինվորականների, այնպես էլ խաղաղ բնակչության շրջանից, անգամ ռազմական գործողություններից հետո գերեվարվեցին եւ մինչ այսօր Ադրբեջանում պահվում են դաժան պայմաններում՝ միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումներով: Հայ ռազմագերիների ազատ արձակման եւ կրոնամշակութային արժեքների պահպանության ուղղությամբ կատարած աշխատանքի համար ցանկանում ենք եւս մեկ անգամ Մեր գնահատանքը եւ շնորհակալությունը հայտնել միջազգային մարդասիրական ու միջեկեղեցական բոլոր կազմակերպություններին եւ այստեղ ներկա ձեզ ամենքիդ:

Պատերազմի օրերին սրբավայրերի ռմբակոծությունը եւ ավերումը, որոնց դրսեւորումները եղան նաեւ պատերազմից հետո, վկայում են Արցախից հայկական հետքը ջնջելու Ադրբեջանի քաղաքականության մասին, ինչպես որ 2003 թ. հիմնապես ոչնչացվեց Ջուղայի հայկական գերեզմանոցի ավելի քան վեց հազար խաչքար, եւ տարածքը վերածվեց հրածգարանի: Դեռեւս թարմ են հիշողությունները, թե պատերազմական գործողությունների հետեւանքով վերջին տասնամյակներին ինչպիսի մշակութային կոթողների ավերածություններ տեղի ունեցան Աֆղանստանում, Իրաքում, Սիրիայում, Եգիպտոսում: Այս առումով խիստ անհրաժեշտ են միջազգային հանրության եւ համապատասխան կազմակերպությունների միահամուռ ջանքերը՝ կանխելու մշակութային եղեռնը, ապահովելու կրոնական եւ մշակութային հուշարձանների պահպանությունը: Հրամայական է Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագիտական առաքելության կողմից հայկական մշակութային ժառանգության վիճակի գնահատումը, որին ամեն կերպ խոչընդոտում է Ադրբեջանը: Ի հավելումն նշենք, որ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Ամենապատիվ Կիրիլ Պատրիարքի, Ռուսաստանի Դաշնության նախագահ տիար Վլադիմիր Պուտինի, ռուսական խաղաղապահ ուժերի ջանքերով հնարավոր եղավ ապահովել Դադիվանքի պատմական մեր հնագույն սրբավայրի կենսագործունեությունը, որտեղ այսօր վեց վանական իր հոգեւոր ծառայությունն է իրականացնում:

Սիրելիներ, հայ ժողովուրդը եւ Հայոց Եկեղեցին դարեր ի վեր պատմական հանգամանքների բերումով եւ հատկապես Հայոց ցեղասպանության հետեւանքով ապրել եւ շարունակում են ապրել աշխարհի գրեթե բոլոր աշխարհամասերում, ամենատարբեր կրոնամշակութային միջավայրերում՝ խաղաղ համակեցությամբ բնակվելով իսլամական, բուդդիստական, հինդուիստական, հուդայական, քրիստոնեական հա-



րանվանությունների հետ՝ լավագույն վկայությունը բերելով աշխարհում կրոնների երկխոսության եւ խաղաղ համակեցության: Կրոնի ազատությունն այսօր էլ գերակա սկզբունք է: Այն ամրագրված եւ երաշխավորված է միջազգային հիմնարար հռչակագրերով, պայմանագրերով, ժողովրդավարական երկրների սահմանադրություններով եւ օրենքներով: Կրոնական ազատության գաղափարը, սակայն, հաճախ իրագործվում է խղճի ու դավանանքի համամարդկային արժեքների ներքո քողարկվող կրոնական ազատության չարաշահումով: Ակնհայտ է, որ դավանանքի ազատության իրավունքի շղարշի տակ ներկայում ձեւավորվում եւ գործունեություն են ծավալում կրոնական նորօրյա տոտալիտար աղանդներ, որոնք, խեղելով մարդկանց հոգեւոր եւ հոգեկան վիճակը, քայքայիչ գործունեությամբ պառակտում են մտցնում ընտանիքներում, հասարակության կյանքում, թշնամանք սերմանում ավանդական կրոնական կառույցների նկատմամբ: Այս առումով եւս պետք է ամեն ջանք ներդնել, որ կրոնական ազատության գաղափարները չարիքի պատրվակ չդառնան, այլ ծառայեն մարդկանց, հասարակությունների եւ ժողովուրդների բարօրությանն ու լուսավոր գալիքին, ամրապնդեն արդեն կես դարից ավելի զարգացող միջեկեղեցական եղբայրության ու համագործակցության ոգին, ծառայեն համընդհանուր քրիստոնեական վկայությանն աշխարհում:

Համաժողովի հարգարժան մասնակիցներ, առ Աստված աղոթքով վերստին Մեր օրհնությունն ենք բերում ամենքիդ եւ ողջունում ձեր ներկայությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Մաղթում ենք, որ աշխարհի տարբեր երկրներից ժամանած կրոնական առաջնորդների, եկեղեցականների, առաջատար գիտնականների ու փորձագետների կողմից ներկայացվող զեկույցները եւ արգասավոր քննարկումները բարի նպաստ լինեն աշխարհում ազատության եւ խաղաղության ամրապնդմանը: Սուրբ Հոգու առաջնորդությունն ենք հայցում ձեզ եւ արդյունավոր ընթացք համաժողովի աշխատանքներին»,– ասաց Վեհափառ Հայրապետը:

Մասնակիցներին իրենց ողջույնի խոսքը հղեցին նաեւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար հայր Իոան Սաուկան, Եվրոպական Եկեղեցիների

Խորագրով երկօրյա միջազգային համաժողովը Մայր Աթոռում

համաժողովի նախագահ հայր Քրիստիան Քրիգերը, ԱՄՆ-ի Եկեղեցիների ազգային խորհրդի գլխավոր քարտուղար եւ նախագահ պրն Ջիմ Ուինքլերը, Ղպտի Ուղղափառ Եկեղեցու՝ Լոնդոնի թեմի առաջնորդ արք. Անգելոսը, Ասորի Ուղղափառ Եկեղեցու՝ Բելգիայի, Ֆրանսիայի եւ Լյուքսեմբուրգի պատրիարքական փոխանորդ Ջորջ արք. Կուրիեն, Անգլիկան Եկեղեցու՝ Ջիբրալթարի եպս Ռոբերտ Իննեսը, Հնդկաստանի Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու էկումենիկ հարաբերությունների բաժնի քարտուղար հայր Աբրահամ Թոմասը, ՀՀ-ում Վատիկանի պապական նվիրակ արք. Խոսե Բետանկուրը, որը փոխանցեց Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի ուղերձը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու՝ Մոսկվայի Պատրիարքության արտաքին հարաբերությունների բաժնի փոխտնօրեն հայր Ֆիլարետ Բուլեկովը, որը փոխանցեց նույն բաժնի տնօրեն Իլարիոն միտրոպոլիտի ուղերձը, Հայաստանում Արեւելքի Ասորի Եկեղեցու սպասավոր հայր Նիկոդեմոս Յուխանաեւը՝ փոխանցելով Արեւելքի Ասորի Եկեղեցու Նորին Սրբություն Գիվարգիզ Գ Սլիվա Կաթողիկոս-Պատրիարքի ուղերձը:

Այնուհետեւ բանախոսեց Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան պրն Արման Թաթոյանը: Վերջինս, իր խոսքում անդրադառնալով կրոնի, խղճի եւ մտքի ազատության արդի հիմնահարցերին, նաեւ ձեռք բերված փաստերի հիման վրա արձանագրեց, որ պարբերաբար ոտնահարվում են արցախյան վերջին պատերազմի հետեւանքով ադրբեջանական գերության մեջ հայտնված հայ ռազմագերիների իրավունքներն ու կրոնական զգացումները, ինչպես նաեւ շարունակաբար ոտնձգություններ են իրականացվում Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հայկական հոգեւոր եւ մշակութային ժառանգության նկատմամբ: Մարդու իրավունքների պաշտպանն Ադրբեջանի որդեգրած նման վարքագիծը որակեց իբրեւ ցեղասպան քաղաքականություն:

Պրն Թաթոյանը նաեւ մեծապես կարեւորեց Հայ Եկեղեցու եւ քրիստոնեական միջազգային կառույցների դերակատարությունն ինչպես մարդու իրավունքների պաշտպանության,

այնպես էլ հոգեւոր-մշակութային արժեքների պահպանության գործում:

Ապա զեկույցներով հանդես եկան Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գործող գլխավոր քարտուղար հայր Իոան Սաուկան («Կրոնական եւ մշակութային ժառանգության պաշտպանության միջոցով աջակցել խաղաղությանն ու կրոնական ազատությանը»), ԱՄՆ-ի Եկեղեցիների ազգային խորհրդի գլխավոր քարտուղար եւ նախագահ Ջիմ Ուինքլերը («Համագործակցության անհրաժեշտությունը կրոնական ազատությունն ու հավատը պաշտպանելու գործում»), Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ եւ նախկին փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսը («Ցավը եւ տառապանքը տարանջատելու առավելությունը»), Ղպտի Ուղղափառ Եկեղեցու՝ Լոնդոնի թեմի առաջնորդ Անգելոս արքեպիսկոպոսը («Համագործակցության անհրաժեշտությունը կրոնական ազատությունն ու հավատը պաշտպանելու գործում»), Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը («Հայկական մշակութային եւ պատմական ժառանգության պաշտպանությունը՝ ըստ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի»), Քրիստոնեական միջազգային համերաշխության նախագահ Ջոն Էյբները («Կրոնական զտումն ընթացքի մեջ. Հայոց ցեղասպանությունը ժամանակից եւ տարածությունից վեր»), մարդու իրավունքների ոլորտի աշխատակից Շեյլա Փալյանը («Մշակութային ժառանգության եւ մշակութային ցեղասպանության կանխարգելումը միջազգային օրենքի պաշտպանության պատասխանատվության ներքո»), Կալիֆոռնիայի համալսարանի գեղարվեստի եւ արվեստի պատմության պրոֆեսոր Հեղնար Ուոթենփոն («Մշակութային եւ կրոնական ժառանգություն եւ մարդու իրավունքներ») եւ Բարնաբասի միջազգային հիմնադրամի տնօրեն քորեպիսկոպոս Պատրիկ Սուքդեոն («Կրոնական ծայրահեղականություն. ազդեցությունն աշխարհում»):

Զեկուցումներից հետո տեղի ունեցան քննարկումներ:

Միջազգային համաժողովի առաջին օրվա ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց եկեղեցական կառույցների ղեկավարներին եւ Եկեղեցիների հոգեւորական ներկայացուցիչներին:

Սեպտեմբերի 10-ի առավոտյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եւ Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Արեւագալի ժամերգություն, որին մասնակցեցին նաեւ միջազգային համաժողովի մասնակիցները:

Էկումենիկ աղոթքից հետո համաժողովը շարունակեց իր աշխատանքը: Ժողովականներին իրենց ուղերձները հղեցին Մայր Աթոռի՝ Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանության հարցերով գրասենյակի տնօրեն Գարեգին վրդ. Համբարձումյանը, Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը, Արցախի արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանը եւ Արցախի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Լուսինե Կարախանյանը:

Ուղերձներում մասնավորապես ընդգծվեց վերջին պատերազմից հետո Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր եւ պատմամշակութային ժառանգության դեմ իրականացվող ոտնձգությունների կանխարգելման անհրաժեշտությունը, ինչպես նաեւ կարեւորվեց միջկրոնական երկխոսությունը՝ որպես հակամարտությունների խաղաղ կարգավորման, ազգային խտրականության եւ անհանդուրժողականության դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցներից մեկը: Այս գործընթացում բարձր գնահատվեց Հայ Առաքելական Ս. Եկեղեցու եւ քրիստոնեական տարբեր կառույցների դերը:

Այնուհետեւ զեկույցներ ներկայացրեցին Եվրոպական եկեղեցիների համաժողովի նախագահ հայր Վերապատվելի Քրիստիան Քրիգերը («Կրոնական հուշարձանների եւ սրբավայրերի անվտանգությունն ու պահպանությունը Եվրոպայում»), ԱՄՆ-ի Կոլորադոյի համալսարանի միջազգային հարաբերությունների բաժնի դասախոս Սիմոն Մաղաքյանը («Կրոնական ազատության միջոցով կանխել Արցախի մշակութային ցեղասպանությունը»), ԵՊՀ-ի դասախոս Համլետ Պետրոսյանը («Մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախ: Արցախի Տիգրանակերտը»), Արցախի մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը («Ադրբեջանական վանդալիզմի դրսեւորումներն Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության, կրոնական իրավունքների եւ Արցախի ժողովրդի ազատության դեմ»), գրող, մշակութային ակտիվիստ եւ ձեռնարկատեր Թոսուլա Հաջիթոֆին («Կրոնական ժառանգությունը՝ որպես միջոց խաղաղություն ու համերաշխություն խրախուսելու գործում»), «Բեթ Մարդութո» եւ «Գորգիաս» լրատվական կայքերի գլխավոր խմբագիր Ջորջ Քիրազը («Հայ-ասորական մշակութային փոխառություններ. ինչպես պահպանել պատմական ժառանգության ինքնատիպությունը»), Թաֆթի համալսարանի արվեստի, պատմության բաժնի պրոֆեսոր Քրիստինա Մարանցին («Կարսի, Անիի հայկական հուշարձանները. դասեր Արցախի համար»), ԱՄՆ-ի Լաֆայեթի քոլեջի պատմության պրոֆեսոր Ռեյչլ Գոշգարյանը («Ապրելով Թուրքիայում ոչնչացված հուշարձանների եւ գերեզմանատների առկայության պայմաններում») եւ Զալցբուրգի համալսարանի քրիստոնեական Արեւելքի ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Ժասմին Դում-Թրագութը («Փոքրամասնությունների մշակութային եւ պատմական ժառանգության պահպանումը»):

Զեկույցների ավարտից հետո համաժողովն ամփոփեց իր աշխատանքը:

Սեպտեմբերի 11-ին ժողովականներն այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, Հայոց ցեղասպանության թանգարան, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարաններ:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի



Վաթսունականների արձակագիրներ.
Ժամանակը եւ հերոսը



Սկիզբը՝ թիվ 12–16

Դեպի ընդհանրացում տանող, համադրությունների ու թափանցումների մղող վիպասանության տարատեսակ համարվեց փիլիսոփայականը. «...մեր արձակը պետք է թեւակոխի ավելի բարձր փուլ՝ հասնի իրականության փիլիսոփայական յուրացման» (*«Վոպրոսի լիտերատուրի», 1975, թիվ 10, էջ 38*):

Փիլիսոփայական էին դիտվում Յուրի Բոնդարեւի «Տաք ձյուն» եւ «Եզերք» վեպերը: Վերջինում կա պատերազմ, որ ուղղորդում է դիպաշարը, կա նաեւ ժամանակակից կյանք, կան մտավորականության մտահոգություններ, սեր, գաղափարական բախումներ: Այդ իսկ պատճառով «Եզերք»-ը բնորոշվում է նաեւ որպես «փիլիսոփայական-քաղաքական վեպ» (*Վ. Սոկոլով, «Վոպրոսի լիտերատուրի», 1975, թիվ 9, էջ 52*): Փիլիսոփայական է համարվում նաեւ Անդրեյ Բիտովի վիպասանությունը («Անիվ», «Ձինվորը», «Ինչ եղել է, այն էլ կա...», «Հայաստանի դասերը», ավելի ուշ՝ «Պուշկինյան տուն»-ը): Բայց, ահա, Գրիգորի Բակլանովը հանդես եկավ եւ հայտարարեց. «Ես, օրինակ, վստահ չեմ, թե փիլիսոփայական վեպը գրականության բարձրագույն աստիճանն է» (*«Վոպրոսի լիտերատուրի», 1975, թիվ 8, էջ 65*):

Այսպես միտումները հասունանում, զուգահեռվում կամ բախվում են, ինչը գրականության կենդանի զարգացման նախապայման է:

Ինչպես միութենական, այնպես էլ հայ արձակն արդիական նյութի գեղարվեստական մարմնավորման առումով կանգնած է հոգեպես հարուստ ու տարողունակ հերոսի հայտնաբերման ու կերպավորման ճանապարհին: Այդ հերոսի բնավորության, նկարագրի, պահվածքի առանձին գծեր արդեն հայտնաբերվել են, մնում է գտնել այդ ամենն իր մեջ խտացնող մեր ժամանակի գլխավոր հերոսին, որը վերածվի գեղարվեստական տիպի:

Այնպես որ, թե՛ հաջողություններով, թե՛ պակասություններով արդի հայ արձակը համամիութենական արձակի օրգանական մի մասն է: Տարբեր են ավանդույթները, տարբեր է միջավայրը, բայց նույնն են հիմնախնդիրները, նույնն է գաղափարական ուղղվածությունը: Սրանք արդեն բավարար հիմք են նույն պահանջների համար:

Հրանտ Մաթեւոսյանն իրական թանձր գույներով ստեղծում է հետպատերազմյան տարիներից 1960–1970-ականներն ընդգրկող հայկական գյուղի առկա պատկերը: Գյուղն իր ներքին կյանքով, մեծ աշխարհի հետ տարատեսակ կապերով դառնում է կենսական կարեւոր հարցերի բացահայտման հիմնական նախադրյալ:

Մաթեւոսյանի բոլոր գործերն օրգանապես կապակցված են. դրանք, կարծես, մի մեծ ու բազմաճյուղ վեպի առանձին գլուխներ լինեն: Նա տարբեր վերնագրերով, միեւնույն ստեղծագործական ուղղվածությամբ, վերարտադրում է միեւնույն շրջապատի մարդկանց կյանքի պատմությունը: Կայուն ու անփոփոխ են թե՛ նրա ստեղծագործության աշխարհագրական միջավայրը, թե՛ կենսական վիճակներն ու հարաբերությունները, որոնք դառնում են ներշնչանքի աղբյուր, եւ թե՛ հերոսները, որոնք միեւնույն նկարագրով եւ կյանքի հանդեպ նույն դիրքորոշումով հանդես են գալիս տարբեր գործերում:

Կյանքի ինչպիսի՞ պատկերներ եւ ի՞նչ կերպարներ է ստեղծում Մաթեւոսյանը, ի՞նչ հիմնական սկզբունքներ են ընկած նրա խոսքի հիմքում: Փորձենք այս հարցերի պատասխանը որոնել նրա հիմնական գործերի քննությամբ, որոնք են՝ «Օգոստոս» ժողովածուն (1967) եւ մամուլում տպագրված մի շարք վիպակներ ու պատմվածքներ՝ «Գոմեշը» (*ՍԳ, 1968, թիվ 8*), «Խումհար» (*ՍԳ, 1970, թիվ 3*), «Երկրի ջիղը» (*ՍԳ, 1972, թիվ 1*), «Սկիզբը» (*«Գարուն», 1974, թիվ 4*), «Ծառերը» (*«Գարուն», 1975, թիվ 7*): Մաթեւոսյանի նշված գործերը, մեկը մյուսին լրացնելով ու ամբողջացնելով, ստեղծում են միեւնույն շրջապատի ու միեւնույն մարդկանց կենսական ու տեսանելի կերպարներ: Մեր ժամանակների մակերեսային, խաբուսիկ, օրվա հետ մոռացվող պատկերներն ու հոգեվիճակներն ամենեւին էլ չեն գայթակղում գրողին. նա փորձում է բացահայտել մարդկային կյանքն իմաստավորող այնպիսի հարցեր, որոնք նրա պատկերած նյութն արժեքավորում են ժամանակակից կյանքի ու մտածողության մակարդակով եւ ի հայտ բերում հոգեբանական, բարոյական, գոյափիլիսոփայական այնպիսի հարուստ ու խոր շերտեր, որոնք (անկախ նրանից՝ մարդը քաղաքաբնակ է, թե՞ գյուղաբնակ, մտավորակա՞ն է, թե՞ հողի աշխատավոր) հոգեհարազատության հիմք են ստեղծում նրա հերոսների կյանքի ու այդ կյանքին ծանոթացողների միջեւ: Մաթեւոսյանի հերոսները, մնալով հանդերձ իրենց ծագման կրողները, յուրովի իմաստավորում են այդ կյանքը եւ նոր կողմերից ներկայացնում, բացահայտում այդ կյանքի էությունը: Սա է առաջին հերթին գրողի տաղանդի ուժը, քանի որ նա կարողանում է իր օգտագործած կենսական նյութը գեղարվեստական փաստ դարձնել աշխարհայացքային այնպիսի նպատակաուղղվածությամբ, որ գալիս խառնվում է ժամանակակից կյանքի գլխավոր իրադարձություններին: Իսկ նրա օգտագործած կենսական նյութն իրեն լավ ծանոթ գյուղական կյանքն է, որ իր մեջ տարբեր ձեւերով բերում է այսօրվա կյանքի հիմնական բովանդակությունը: Մնալով մեր ժամանակների հետ արտաքուստ ցցուն կապեր չունեցող նյութի շրջանակներում՝ նա հմուտ ներքնատեսությամբ կարողանում է շերտ առ շերտ բացահայտել կյանքից աստիճանաբար դուրս մղվող գյուղաշխարհի կարծր ու հին արմատները, որոնք սնունդ են առնում այսօրվա կյանքից եւ դառնում ժամանակակից իրականության օրգանական մասը:

➥ *էջ 8*

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՈԳԵՂԵՆ ՕՁԱԽՈՒՄ

Սկիզբը՝ թիվ 16

Վարդան Սարգսյանն է ինձ առաջնորդում թանգարան: Նրանից տեղեկանում եմ, որ մշակութային այս օջախը 1970-ին բացվել եւ կայացել է տեղական իշխանությունների ջերմագին հոգածության շնորհիվ, իսկ 1976-ից՝ դարձել Երեւանի Ե. Չարենցի անվան արվեստի եւ գրականության թանգարանի մասնաճյուղը: Հետագայում, գրողի ծննդյան բարեառիթ հոբելյանների՝ 90 եւ 105-ամյակների կապակցությամբ, այն հիմնովին նորոգվել ու բարեկարգվել է՝ վերափոխվելով հուշահամալիրի: Գովելի է եւ սրտացավ այս վերաբերմունքը. անխաթար պահպանվել են տան բնօրինակ ճակատը եւ ընդհանրապես նրա ճարտարապետական կերպը. այն գրեթե այնպես է, ինչպես Բակունցի բնակության ժամանակ էր: Բակունցների տունը գրավիչ ու ակնահաճո է նաեւ իր պարզությամբ, ինչն այցելուներին հնարավորություն է ընձեռում լավագույնս պատկերացնելու զանգեզուրյան հայկական օջախի կենդանի կյանքն ու կենցաղը:

Տնօրենը գործիմացորեն, սիրով ու արժանի հպարտությամբ է ներկայացնում թանգարանը: Անցնում ենք բոլոր՝ չորս սրահներով, ծանոթանում հարուստ ու բազմաբովանդակ ցուցանմուշներին: Դրանք տան հնաոճ կահույքը, գրողի անձնական իրերն են, գրքերը, տետրերը ու փաստաթղթերը, ժամանակի պարբերական մամուլում հրապարակված նյութերը՝ գրական եւ մասնագիտական (ճիշտն ասած, թող ինձ ներվի, հոգուս խորքում ափսոսանք եմ զգում, որ մեր արձակի անզուգական Վարպետը, մասնագիտության եւ աշխատանքի բերումով, թանկագին ժամանակ է վատնել գյուղատնտեսական թեմաներով բազմաքանակ հոդվածների, ուղեցույցների ու գրքույկների վրա...):

Գրողի ննջարանում նրա մահճակալն է, հագուստը, աշխատասեղանն ու աթոռը, մայրիկի գործած գունագեղ գորգերից: Հարեւանությամբ նաեւ փոքրիկ խոհանոց կա, եւ թոնիր, որտեղ հոգատար, անխոնջ Բաղչագյուլ մայրիկը լավաշ է թխել, հետո՝ համով բաղարջ ու գաթա...

Հաջորդ սրահի պատին «Ակսել Բակունցի մոր դիմանկարը» յուղաներկ աշխատանքն է, որի հեղինակը մեծն Մարտիրոս Սարյանն է: Կտավից՝ Վարպետի հավերժացրած անթարթ հայացքով նայում է Բաղչագյուլ մայրիկը: Այստեղ անհրաժեշտ փոքրիկ նախապատմություն կա:

1935-ի ամռանը նկարիչ ընկերների հետ Գորիս է գալիս Մ. Սարյանը եւ իր պարտքն է համարում անպայման այցելել Ակսել Բակունցին:

«Ակսելի հրճվանքին չափ ու սահման չկար»,– գրում է Վահան Բակունցը: Նրանք երկարատեւ ուրախ զրուցում են:

«Այստեղ ինչ-որ կարոտ էր առաջացել գույների ու խոսքի մեծ Վարպետների միջեւ»,– դիպուկ նկատում է Վ. Բակունցը:

Եվ Վահան Բակունցը, եւ Մարիամ Ասլամազյանը ականատես են եղել նկարի կերտմանը: Իրենց հուշագրություններում նրանք հաճույքով են պատմում այդ եղելությունը: Վ. Բակունցն իր «Մեծ հույզերի սերմնացանը» գրքում հիշում է, որ Մ. Սարյանը Գորիս էր եկել նկարելու «ինքնատիպ ու գեղեցիկ բնությունը»: Գորիսով հիացած Վարպետին արդեն հասկանալի է դառնում, «...թե որտեղից են Ակսելի սքանչելի սյուժեները... Այդ բոլորը Գորիսի աննման բնությունն է նվիրել նրան»:

Մարիամ Ասլամազյանն էլ «Կյանքիս դավթար»-ում հիշատակում է. «Ակսելը Սարյանին հրավիրեց իր տանն ապրելու եւ ստեղծագործելու: Այս ընթացում Մարտիրոս Սերգեյիչը նկարեց Ա. Բակունցի մայրիկի դիմանկարը եւ նվիրեց նրան»: Ակսելը երեխայի պես ուրախացել էր նկարի համար: Նա հիացմունքով մորը ասում էր. «Դու գիտե՞ս, թե ով է նկարել քո դիմանկարը: Մենք



Գործ՝ Մ. Ասլամազյանի

բոլորս էլ կհեռանանք այս աշխարհից, իսկ այս նկարը կմնա հավերժ»:

Այստեղ արժե մեջբերել նաեւ Վահան Բակունցի հիշատակած այն դրվագը, թե ամոթխած մայրն ինչքան է նեղվել բնորդի իր դերից: Նա հետո գանգատվել է, որ իրեն անշարժ «մին ժամից ավել էդ մարդը նստացրել ա չոր աթոռին, թա պատկերդ քաշում եմ: Հոգիս տյուս եկավ, համութից քիչ էր մնում տափը ճղվեր մեջը մտնեմ: Բա կնիկարմատը էդքան վախտ խալխի տղամարդու երեսին կյեշի՞»:

Երախտագետ Մարիամ Ասլամազյանն էլ է բարի հիշատակ թողել տուն-թանգարանին, ասել է թե՝ բակունցների հյուրընկալ օջախին:

Նկարչուհին, ի սեր անմոռաց ընկերոջ՝ Ակսելի, հետագայում պատկերել է նրան սիրելի մայրիկի հետ՝ Գորիսի երկնամուխ, արեւառ ժայռերի ֆոնին: Հիմա թանգարանին մի առանձնակի շուք ու հմայք է տալիս այս բազմախոսուն հոյակապ յուղաներկ կտավը:

Կանգ ենք առնում ցուցանակի պատին փակցված մի հնօրյա փաստաթղթի առջեւ, եւ ուշադիր ընթերցում եմ:

Դարձյալ փոքրիկ ծանոթագրություն. Ակսել Բակունցի կենսագրության հայտնի փաստ է, որ 1910 թ. մայիսին նա բարձր առաջադիմությամբ ավարտում է Գորիսի հնգամյա ծխական դպրոցը: Ճակատագրորեն բախտորոշ է լինում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան ճեմարանի առաջադեմ սան, ազգակից Երեմիա Բակունցի խորհուրդը Ալեքսանդրին՝ ուսումը շարունակելու հեղինակավոր նույն կրթօջախում՝ ճեմարանում: Գործը հաջող ընթացք է ունենում. մի մեծ խումբ համախոհ, մտավոր գորիսցիներ «ԽՈՆԱՐՀ ԽՆԴԻՐ»-ով եւ «որդիական վստահությամբ» դիմում են հղում Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Մաթեոս Բ-ին՝ նրա «...հայրական խնամքը վայելող ճեմարանի գիշերօթիկ սաների շարքում ընդունելու տեղույս ծխական դպրոցը ամենագովելի ու առանձնահատուկ ընդունակությամբ ավարտած Ալեքսանդր Ստեփանի Թեւոսյան Բակունցին»: «Առ որ մնամք Ձերդ Սրբազան Օծության Սրբազնագույն աջը համբուրող ամենախոնարհ որդիք: 1910 թ. 10-ն օգոստոսի, քաղ. Գորիս»:– Խնդրագրի վերջում հերթով ստորագրել են 152 մարդ: Այսպիսով՝ բարի կամքի տեր արժանապատիվ այդ մարդիկ մի տաղանդավոր, օժտված պատանու առջեւ բացեցին լույսի ու լուսավորության նախադուռը՝ ժամանակի հետ գիտության դժվարավերելք, բարձրագնա աստիճաններով ելնելու... հայ արձակի գագաթը...

Դրսում՝ արեւոտ պատին հենած ցանցավանդակներում, զանազան թռչուններ են պահվում: Դրանցից ամենաշքեղը, իհարկե, փասիանն է՝ միրհավը՝ իբրեւ կենդանի խորհրդանիշ Ակսել Բակունցի անմահ «Միրհավի»:

➥ *էջ 8*

ՀԱՅ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՄԱՍՈՒՆԴՔԱՐԱՆԸ

Սկիզբը՝ թիվ 11–15

Զանգվածային ձեռնարկումներ կազմակերպելիս թանգարանը չի մոռանում նաեւ ավագ սերնդին. տեղին է հիշել ծերերի տունինտերնատների համար կազմակերպված «Մեկ օր թանգարանում» ակցիան:

Մեր մեծաց մասունքների մեկդարյա ամփոփարանն ուշադրության կենտրոնում է պահում նաեւ մատաղ սերնդի, երիտասարդության մշակութային կրթության խնդիրը, Հայաստանի վաղվա քաղաքացիների մեջ սեփական մշակույթի նկատմամբ սեր, պաշտամունք սերմանելը, նրանց իրենց մշակույթի կրողը դարձնելը, նրանց մեջ մշակութային արժեքը չարժեքից զանազանելու կարողություն ձեւավորելը, ասել է թե՝ մեր ազգի, մեր հասարակության, մեր պետության, մշակութային անվտանգության խնդիրը, եւ իբրեւ սրա դրսեւորում՝ պարբերաբար կազմակերպել ու կազմակերպում է կրթական ծրագրեր. վերջիններից են՝ «Կինոգետ», «Անկախ Հայաստան», «Աշունն իմ ձեռքերով», «Թղթե հեքիաթ», «Իմ կատակ թերթը», «Հողի ուժը», «Ես բեմանկարիչ եմ», «Ազգային նվագարանների աշխարհում», «Գորգի կախարդական աշխարհը», «Կարաոկե թանգարանում. Կոմիտասի երգերի օրինակով», «Ստվերների թատրոն թանգարանում», «Ինչպես են ստեղծվում մուլտֆիլմերը», «Բացահայտում»՝ եռամաս խաղ-էքսկուրսիա: Նշենք նաեւ Հայաստանի եւ Արցախի զորամասերում, բուհերում, կրթական այլ հաստատություններում կազմակերպված շրջիկ ցուցադրություններն ու դասախոսությունները:

Ինչպես վերն արդեն ասացինք, առանձնացված է նաեւ թանգարանի ունեցած գրականությունը. հոբելյար հաստատության կազմում գործում է գրադարան: Վերջինիս տպագիր ֆոնդերը տեղաբաշխված են 3 տարբեր բաժիններում՝ ընդհանուր, ֆոնդային եւ մամուլի: Ընդհանուր բաժնում պահպանվում են հայերեն եւ այլ լեզուներով աշխարհի հատկապես հայաշատ վայրերից ստացված շուրջ 100 000 հայերեն ու օտարալեզու գրականություն եւ պարբերական մամուլ՝ գեղարվեստական ու գիտական:

Գրադարանն արժեւորվում է հատկապես ֆոնդային՝ հայ գրողների, հայագետների անձնական գրադարանների առկայությամբ. մոտ 25 000 գիրք: Մեծ արժեք ունեն դասական գրողներ Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Գ. Սունդուկյանի, Հ. Թումանյանի, Գ. Զոհրապի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Ե. Չարենցի, Դ. Դեմիրճյանի, հայագետներ Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի եւ այլոց գրքային ֆոնդերը: Գրքային հարուստ ֆոնդեր են Վ. Մավյանի, Վ. Հապեշյանի, Ս. Քոչարյանի, Համաստեղի եւ շատ այլ գրողների ու ավեստագետների գրադարանները: Չափազանց հարուստ են հատկապես Թ. Ազատյանի, Ա. Չոպանյանի եւ Պոլսո հայոց պատրիարք Գ. Արսլանյանի գրքային ֆոնդերը, որոնք ընդգրկում են թե՛ հայերեն եւ թե՛ օտար լեզուներով հազարավոր գրքեր ու մամուլ. դրանց մեջ կան նաեւ մի շարք եզակի նմուշներ: Այսպես՝ Թ. Ազատյանի եւ Գ. Արսլանյանի ֆոնդերի միջոցով մեզ են հասել նշանավոր «Բյուզանդիոն», «Նոր օր», «Վերջին լուր» եւ «Բազմավեպ» պարբերականների ամբողջական հավաքածուները: Ֆոնդային գրադարանները հարուստ են ընծայագրերով գրքերով՝ ֆոնդատերերի ստացած կամ նվիրած: Այդ մակագրությունները հաճախ լույս են սփռում տվյալ գործիչների կենսագրության ու ստեղծագործական առնչությունների վրա:

Ակնարկում արդեն նշել ենք, որ ԳԱԹ-ի գրքային հարստության մասն են կազմում 500-ից ավելի հնատիպ գրքերը. հնատիպներով հատկապես հարուստ է Թ. Ազատյանի ֆոնդը:

Գրադարանում ի պահ է տրված հին ու նոր պարբերական մամուլի ավելի քան 30 000 նմուշ: Սրանից բացի՝ չափազանց մեծ թիվ են կազմում մամուլի էջերից հանված եւ անհատական փոքր ֆոնդերում պահվող բազմաբնույթ բովանդակությամբ հազարավոր մամուլի կտրոնները:

Վերջերս գրադարանը Վ. Մավյանի այրուց նվեր ստացավ Մավյանի անձնական գրադարանը, որտեղ առկա են շուրջ 60 հնատիպ գիրք եւ մամուլի եզակի նմուշներ:

Տեխնիկայի զարգացումն զգալի հնարավորություններ է տալիս նաեւ մշակութային արժեքների պահպանման ու տարածման համար: Վերջին տարիներին թանգարանում գործում է ֆոնդային նոր բաժին՝ տեսաձայնադարանը, որտեղ կենտրոնացված են ֆոնդերում առկա ձայնային ու տեսային բոլոր նյութերը: Ֆոնդային այս բաժնում պահպանվում են ձայներիզներ, ձայնասկավառակներ, կինոժապավեններ, տեսաժապավեններ, CD-ներ, DVD-ներ. 1000-ից ավելի նյութ: Արդի տեխնիկայի ընձեռած միջոցներով պահպանվող բնօրինակները հնարավորինս վերամշակվում, վերաձայնագրվում ու թվայնացվում են, վերածվում նոր ֆորմատների: Տեխնիկական միջոցներով հավերժացել եւ սերունդներին են ի պահ տրվել մեր մեծերի ձայնն ու խոսքը: Արժեքավոր են հատկապես մեծն Կոմիտասի եւ Ա. Շահմուրադյանի կատարումներով ձայնասկավառակները, դերասանական արվեստի հսկաներ Վ. Փափազյանի, Ի. Ալիխանյանի, Հ. Ներսիսյանի, Օ. Գուլազյանի, Գ. Գաբրիելյանի, Հասմիկի, Ա. Արմենյանի, Ա. Ոսկանյանի, Ս. Քոչարյանի եւ շատ ուրիշների դերակատարումների ու ասմունքային համարների ձայնագրությունները: Ժապավենների վրա ամրագրված եւ հավերժին են ի պահ հանձնված նաեւ մեր որոշ խորհրդահայ ու սփուռքահայ գրական մեծերի (Ա. Իսահակյան, Դ. Դեմիրճյան, Զ. Եսայան, Ա. Չոպանյան, Պ. Սեւակ, Հ. Շիրազ, Հ. Մնձուրի եւ այլք) տարբեր առիթներով ունեցած ելույթներն ու հարցազրույցները, մի շարք հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Բոլոր այդ նյութերն առանձնակի փայլ ու հմայք են տալիս թանգարանի տարաբնույթ միջոցառումներին եւ լավագույնս նպաստում նոր սերնդի գիտելիքների պաշարի հարստացմանն ու գեղարվեստական ճաշակի ձեւավորմանը:

Ինչպես վերն արդեն ասացինք, թանգարանին մշտապես արվել են բազմաթիվ նվիրատվություններ. հուրախություն հայ մշակույթի՝ մեր հոգեւոր տիրույթի որոշ նշանավոր գործիչներ հենց իրենք կամ էլ իրենց ժառանգներն ու այլ անձինք թանգարանին են հանձնել իրենց ամբողջական հավաքածուները կամ առանձին առարկաներ:

Այսօր էլ հայրենիքում ու արտերկրում որոշ հայ մեծերի ժառանգներ եւ այլ անձինք, հնարավոր է, ունենան մեր մշակույթի երախտավորների ձեռագրեր, անձնական իրեր եւ այլն: Սակայն տնային պայմանները, որպես կանոն, բավարար չեն մեծաց մասունքների պահպանման համար (ջերմաստիճան, խոնավություն, լույս եւ այլն), դրանք, հատկապես թղթե առարկաները, կարող են փչանալ, փտել եւ այլ կարգի վնասներ կրել կամ էլ անուշադրության մատնվել, հայտնվել այնպիսի մարդկանց ձեռքերում, որոնք գաղափար անգամ չունեն դրանց արժեքի մասին: Ցավոք, նման դեպքեր եղել են. Եկմալյանի հարազատները, պատկերացում չունենալով մեծ երաժշտի վաստակի կարեւորության մասին, նրա ձեռագրերը հնոտիների հետ վաճառել են՝ հայ եւ համաշխարհային մշակույթը զրկելով, ամենեւին չի բացառվում, նույնիսկ մի շարք գլուխգործոցներից եւ Եկմալյանի կյանքի ու գործի հետ կապված բազմաթիվ իրողություններ բացահայտելու հնարավորությունից: Փրկվել են միայն այն նյութերը, որոնք եղել են նրա աշակերտների ձեռքում: Ուստի խոսքս թող հնչի որպես ահազանգ, որպես զգոնության կոչ. եթե մեր մշակութային արժեքների բնօրինակները, մեր մեծերի մասունքները ձեռք չբերվեն այսօր, վաղը կարող են անէանալ, կորսվել անդարձ:

Ցավով նշենք, որ Հայաստանի օրենսդրությունը նման դեպքերի համար (արտերկրի մեր հայրենակիցներին պատկանող արժեքավոր նմուշները Հայաստան տեղափոխելը) հստակեցված չէ, ինչը խոչընդոտներ է հարուցում նրանց առջեւ, ովքեր ցանկություն ունեն իրենց տանը պահվող թանգարանային առարկաները Հայաստան տեղափոխել: Այս խնդիրը, անշուշտ, պետք է հնարավորինս շուտ լուծում ստանա. հայ մշակույթի ու վերջինիս մեծ մշակների նշխարներն ու մասունքները պետք է անխոչընդոտ ու անարգել տեղափոխվեն Հայաստան, քանզի Մայր հայրենիքը՝ հայրենի հողում գտնվող թանգարաններն են դրանց վերջնահանգրվանը, որտեղ նրանք կբնակվեն լիակատար հոգածության ու խնամքի, լիակատար պաշպանության եւ լիակատար ակնածանքի պայմաններում՝ տարբեր առաքելություններով ծառայելով մշակութաստեղծ հայ ժողովրդի սերունդներին:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու

ԱՅՐԻՎԱՆՔ (ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ) ԵՒ ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴ

⮐ *էջ 3*

Հետագայում նա հաստատվել է Կապադովկիայի Կեսարիա քաղաքում, ուր եւ նահատակվել է:

Գեղարդով Ամենասրբությանը՝ Հիսուսի սրտին էին հպվել, եւ այդ պահից գեղարդը դարձել է սրբազան մասունք, քանզի սրբությանը հպվողն ինքն էլ է սրբանում, ինչպես մկրտվողը, սուրբ ավազանի ջրով մաքրվելով, սրբվում է բոլոր մեղքերից ու կնքվում սուրբ մյուռոնով:

Ավանդությունը հավաստում է, որ Հիսուսի տասներկու առաքյալներից երկուսը՝ Թադեոսն ու Բարդուղիմեոսը, եկել են Հայաստան ու քարոզել Աստծո խոսքը: Առաքյալների խոսքը հաստատվում էր բազմաթիվ հրաշագործություններով, որոնք իրականանում էին իրենց բերած սրբությունների շնորհիվ: Թադեոս առաքյալն իր հետ բերել էր սուրբ գեղարդը, իսկ Բարդուղիմեոսը՝ սուրբ Տիրամոր պատկերը, որը Վասպուրականի Անձեւացիք կամ Անձեւացյաց գավառի Հոգյաց վանքին էր ի պահ տրվել: Ըստ Մովսես Խորենացու՝ Թադեոս առաքյալը, Տիրոջ գեղարդն իր հետ բերելով Հայաստան, քարոզում է Աբգար թագավորին ու արքունիքին, բժշկում տասներկու տարի անբուժելի բորոտության ախտից տառապող թագավորին:

Սանատրուկ թագավորի օրոք Թադեոս առաքյալն աստվածամուխ գեղարդով մեծամեծ հրաշքներ էր գործում ու չար ախտերով

տառապող հիվանդների բժշկում: Այդ ամենը տեսնելով ու լսելով՝ դարձի է գալիս նախ Սանատրուկի դուստրը՝ Սանդուխտ կույսը, ապա թագավորի քույրը՝ Ոգուհին: Հետագայում այս երկու կույսերը նահատակվում են Սանատրուկ թագավորի հրամանով:

Դրանից հետո երկար տարիներ սուրբ գեղարդը գտնվում էր Փոքր Հայքի Կամրջաձորի վանքում, իսկ երբ սկսվում են սելջուկների ավերիչ ասպատակությունները, սուրբ գեղարդը խաչափայտի մի մասունքի հետ միասին դնում են կավե պուտուկի մեջ ու թաքցնում հողի տակ: Անցնում է 177 տարի, եւ Կամրջաձորի վանքում բնակվող մի այլազգի բարեպաշտ կնոջ՝ Սամսամ անունով, երեք անգամ երազ է հայտնվում, որից հետո նա հրամայում է փորել այդ տեղը: Ի զարմանս բոլորի՝ գտնում են պուտուկը եւ մի դեռատի օրիորդի ձեռքով հանում են պուտուկն ու բերում վանք:

Այնուհետեւ ավանդությունը մեզ տեղեկացնում է, որ քաղաքական անբարենպաստ պայմանների եւ հատկապես մոնղոլ-թաթարական արշավանքների հետեւանքով ստեղծված անապահով դրության պատճառով անհրաժեշտություն է առաջանում սուրբ գեղարդը Ս. Էջմիածնից տեղափոխել ավելի ապահով՝ թշնամու աչքից հեռու մի անկյուն: Այդպես սուրբ գեղարդը Պռոշ իշխանի ջանքերով 1260 թ. հայտնվում է Այրիվանքում, ուր պահվում է մոտ 500 տարի: Այդ ժամանակներից Այրիվանք-Գեղարդավանքը դառնում է հայ ժողովրդի ամենասիրած ուխտավայրերից մեկը:

Հրաշագործ սուրբ գեղարդի հռչակը վաղուց տարածվել էր Հայաստանում եւ մերձակա ու հեռավոր երկրներում: Եվ ահա 1798 թ. վրաց թագավոր Գեորգի XII-ը Հայոց կաթողիկոս Ղուկաս Ա Կարնեցուն (1780–1799 թթ.) թախանձագին դիմում է հղում՝ թույլ տալ սուրբ գեղարդը Վրաստան բերել, քանի որ մահաբեր ժանտախտի համաճարակ էր բռնկվել: Երկար մտորելուց հետո քրիստոսասեր կաթողիկոսը թույլ է տալիս, որ աստվածամուխ գեղարդը երկու հայ վարդապետների ուղեկցությամբ տանեն Վրաստան՝ դրացի բարեկամ ժողովրդին պատուհասած աղետից փրկելու համար: Սուրբ գեղարդը թափորով ու աղոթքներով պտտեցնում են Վրաստանում: Ժանտախտի համաճարակը նահանջում է: Վրաց թագավորը, սակայն, հապաղում է, չի ցանկանում վերադարձնել հրաշագործ սրբազան մասունքը, եւ սուրբ գեղարդը երկար ժամանակ պահվում է Թիֆլիսում:

1800 թ. Թիֆլիսում ծառայող հայ հոգեւորականներից Հովհաննես արքեպիսկոպոսին հաջողվում է ձեռք բերել սուրբ գեղարդը եւ մեծ դժվարություններով, զանազան հնարքներ բանեցնելով, ծածուկ հասցնել Մայր Աթոռ, որի համար էլ նրան մեծարում են «Հովհաննես Գեղարդակիր արքեպիսկոպոս» պատվանունով:

Շարունակելի

Արման ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Վաթսունականների արձակագիրներ. *Ժամանակը եւ հերոսը*

➥ *Էջ 6*

Գյուղական իրականության մեջ գործող վիճակների ու հարաբերությունների մանրազնին ու հետեւողական նկարագրությամբ Մաթեւոսյանը կարողանում է ի հայտ բերել ժամանակակից կյանքի ներթափանցմամբ գյուղական կյանքով ապրող մարդկանց էության մեջ կատարվող տարբեր կարգի հոգեբանական տեղաշարժեր:

Գյուղը միայն միջավայր չէ, ուր կատարվում են գործողությունները. գյուղի առկայությունն սկզբունքային խնդիր է. էությունն այն է, որ այսօրվա մեր ջղային, նյարդային դարում, արագությունից, շարժումից ու թափից գլուխը կորցրած, ճշգրիտ հաշվարկումների, մարդ-մեքենաների դարում, երբ ամեն ինչ մղվում է դեպի մանրացում, փոքրացում, հաշվարկում ու պլանավորում, նա բնության ձայնին հավատարիմ մնալու հարցեր է արծարծում եւ ենթաշերտերում, ամեն առիթով, բնության ձայնը, բնական վիճակը հակադրում քաղաքակրթության բերած եւ քաղաքակիրթ թվացող արատավոր կողմերի միջամտությանը:

Այս տեսակետից ուղենշանային է «Գոմեշը» պատմվածքը: Մի ստեղծագործություն, որի մեջ վարար ու հորդուն եռքով նկարագրվում են բնության ազատ տարերքը, մաքուր ու կուսական բնության ձայնը: Գոմեշի մեջ արյունը տաք ու խելացնոր եռ է գալիս, եւ նա գնում է բեղմնավորվելու, գոմշացուլ որոնելու: Հեղինակը խորանում է կյանքի հիմքերը կազմող վայրի, բնական ու նախնական բնազդների ընդերքը: Այդ բնազդներն ընկած են մարդու զգայությունների ու մտածումների հիմքում եւ իրենց ներքին շարժմամբ կարգավորում են կյանքը: Մի կողմից՝ բնական զգայությունների տարերք, որը, ըստ էության, սերն է, բնության ամենազորեղ ուժը, կեցության նախահիմքը կազմող մի զգացողություն, մյուս կողմից՝ քանոնով գծագրված ու միլիմետրերի ճշգրտությամբ հաշվարկված կյանքը, մի կողմից՝ բնության շնչառություն, սարերի, ծաղիկների, հովի ու հողի բուրմունք, մյուս կողմից՝ ասֆալտի ու կարբիտի գարշահոտ: Այս հակադրությունն իր հրաշալի ձեւակերպումն է գտել պատմվածքի մի հատվածում, ուր դեմ առ դեմ կանգնում են բնության նախնական ու ազատ տարերքը եւ քաղաքակրթության ստեղծած օրենքներն ու կարգ ու կանոնը: «Հարբած վիճակում հասարակության լուսամուտների տակ երգելու համար նկարիչ Ռուբեն Կոստանյանի գանգուրները միլիցիան խուզել էր եւ նրան չորս օրով տվել ասֆալտ եփող-մամլող հիմնարկին»,— պատմում է հեղինակը եւ անմիջապես ձայնը տալիս իր հերոսին՝ Ռուբեն Կոստանյանին. «Սրիկանե՛ր,— ասֆալտը ճանկռելով ասաց նա,— ստորնե՛ր, բռնադատիչնե՛ր... ինչո՞ւ ազատ են լեռան գոմեշը, թռչունը, քամին, թուփը, իսկ ես ազատ չեմ: Մամլակնե՛ր, ռոբոտնե՛ր, խորանարդնե՛ր, քառակուսինե՛ր, ջարդող-կտրող-խուզող-ձեւողնե՛ր...»:

Այս ընդվզումը նորություն չէր «Գոմեշը» պատմվածքում: Այն իր նկատելիորեն խոր թաքնված արմատներն ունի նաեւ «Մենք ենք, մեր սարերը» վիպակում, ուր սարերի օրենքով մեծացած մարդիկ, բախվելով քաղաքակրթության որոշ կողմերի, բացականչում են. «Աշխարհը շինել եք հաշվապահություն»: Մի կողմից՝ վայրի ու ազատ լեռնականներ՝ իրենց «հովիվների հանրապետությամբ», մյուս կողմից՝ մանրուքների մեջ թաթախված կյանք ու դրանից ածանցված «հաշվապահություն»: Առաջինի կրողները Զավեն Քոչարյանը, Իշխան Անտոնյանը, Պավլեն, Ավագը եւ մյուս հովիվներն են, իսկ երկրորդի՝ լեյտենանտ Հակոբյանը եւ հատկապես Ծառուկյանը: Լեյտենանտ Հակոբյանին հեղինակը դեռեւս արդարացնելու եւ ներելու տեղ թողնում է, որովհետեւ նա նախ առաջադրանք է կատարում եւ ապա, տեսնելով հովիվների ծանր աշխատանքը, կարող էր նաեւ ամաչել նրանց մոտ հարցաքննության գալու հանձնարարության համար: Իսկ ծաղրաբարո Ծառուկյանը բոլոր տվյալներն ունի դառնալու իր տեսակի մեջ անկրկնելի մի տիպ: Խիստ ու անզիջում է հեղինակը մեր կյանքին հատկանշական այդ կարգի մարդկանց հանդեպ. «Եվ Ծառուկյանի գլխի փոքրության, եւ տնամերձի այդքան գուրգուրոտ վանդակավորման եւ այդ ներկի ու առանց փոթերի հագիվ իրար եկած վարագույրների մեջ մարդ տեսնում էր իր չնչինությունը»: Անմիջապես հետեւում է հակադրությունը. «Եվ այդ պահին էլ նրա սիրտը կարոտի պես ծակեց սերը դեպի իր լեռները՝ վերձիգ, կոշտուկոպիտ, միանգամից ձորն ընկնող անդունդներով ու միանգամից վեր սրվող ժայռերով, միանգամից շփշփացող անձրեւով եւ կայծակնորեն հանկարծակի վառվող արեգակով»: Լեռների օրենքներին ու բնության ձայներին վարժված մարդիկ՝ «հովիվների հանրապետության» ներկայացուցիչները, ունեն իրենց նիստուկացը, եւ նրանց ըմբռնումներին ու հարաբերություններին միանգամայն ավելորդ է հաշվապահական միջամտությունը: Այդ միջամտությունն ստեղծում է բախում հերոսների ըմբռնումներին ավելի մոտ կանգնած բնական օրենքների եւ կանոնագրքերում արձանագրված օրենքների միջեւ: Այդ մարդիկ կորցնում են իրենց ոտքի տակի հողը, որ իրենց հարաբերության, հարցերը լուծելու՝ ժամանակի ընթացքում մշակված սովորություններն են եւ քաշվում են այլ հարաբերությունների մեջ: Հեղինակի ընդվզումը բացահայտ է այդ միջամտության դեմ. այլ կերպ լինել չէր կարող: Կարեւորն այն չէ, թե ինչ վերջաբան է ունենում դիպաշարը: Կարեւորն այն է, որ իրենց գործը անհաշվենկատ անող մարդիկ դառնում են հաշվենկատ, դառնում մի քիչ «հաշվապահ»:



Իսկ դա արդեն խարխլում է նրանց կյանքի հիմքերը, քայքայում բնականորեն ձեւավորված հարաբերությունները եւ նետում այլ հարաբերությունների մեջ: «Հաշվապահությունը» գյուղացուն կտրում է հողից, մեռցնում է նրա մեջ գործին նվիրվածությունը, եւ բնության հարազատ որդին խորթանում է իր սարին ու քարին, օտարվում իր արմատներին, կտրվում ինքն իրենից, փորձում նոր հարաբերությունների մեջ գտնել իր տեղը եւ ճշտել իր կյանքի իմաստը: Իսկ այդ նոր հարաբերությունները կապվում են քաղաքակրթության կենտրոնների՝ քաղաքների հետ, ուր նրանք մինչեւ նոր կյանքի հունի մեջ մտնելը՝ նախ կորցնում են իրենք իրենց, անդեմանում եւ ապա իրենց ժառանգների շարունակությամբ հարմարվում նոր պայմաններին:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՈԳԵՂԵՆ ՕՁԱԽՈՒՄ

➥ *Էջ 6*

Խորհրդանշական է եւ այն իրողությունը, որ տուն-թանգարանին կից գործող գրական ակումբը նույնպես «Միրհավ» անունն ունի. հանրության համար պարբերաբար կազմակերպվում են գրական-երաժշտական միջոցառումներ, ընթերցումներ, գրքերի շնորհանդեսներ, ավելի խորությամբ է ուսումնասիրվում Բակունցի գրական ժառանգությունը, անդրադարձումներ կատարվում Հայաստանի գրական եւ մշակութային կյանքին:

Իջնում ենք ներքնահարկ, որտեղ Բակունցի ընտանիքի մառանն է, հացատունը եւ խոհանոցը՝ մեծ թոնիրով, առաստաղից չորս լարով կախված՝ դարս-դարս լավաշի տախտակամածով, հնաոճ կոմոդով, մեծ ու փոքր կճուճներով, կուժ ու կուլայով, պղնձե, փայտյա եւ խեցեղեն կենցաղային իրերով: Այցելել եմ նաեւ Վահան Տերյանի եւ Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան դարձած հայրական օջախները: Ճշմարիտ է՝ բոլորն էլ հայկական-հայաշունչ են, սակայն առաջինում՝ Ջավախքին, մյուսում՝ Լոռուն, իսկ այստեղ Զանգեզուրին բնորոշ իրերն ու կենցաղավարությունն են՝ նկատելի զանազանություններով: Եվ դա բնական է. չէ՞ որ Պատմահայր Խորենացու համար Հայաստանի ամեն երկրամաս մի... աշխա՞րհ էր...

Հուշահամալիրի ուշագրավ մաս են բազալտյա ժանեկազարդ խաչքար-շատրվանը՝ ցայտաղբյուրով եւ ծառաբների վրա արված քանդակներով: Հատկանշական է, որ ժամանակին Ակսել Բակունցի ձեռքով տնկված թթենին եւ երկու ընկուզենին, մոտ 80–90 տարի մարդկանց առատ պտուղներ շռայլելուց հետո, երբ ծերացան ու չորացան, գորիսեցի շնորհաշատ նկարիչ Ժիրայր Մարտիրոսյանը դրանց հաստաբուն բնափայտը կերպավորեց իբրեւ բակունցյան գրական հերոսներ՝ Սոնային («Միրհավ»), Արթին պապին («Նամակ ռուսաց թագավորին») եւ գրողի մայրիկին՝ զանգեզուրյան գլխակապով:

Քայլում ենք այգու բարձր ծառերի եւ վարդենիների միջով: Ոտքերս գետնին եմ դնում մի տեսակ երկյուղածորեն, ավելի հուզումնալի... ախր ուրիշ խորհուրդ ունի այս այգին, ուր մեծն Բակունցի հեռավոր ոտնահետքերն են... Այգին փթթում է կանաչ շնչով ու արեւահամ պտուղներ տալիս: Թանգարանի տնօրենին խնդրում եմ ցույց տալ բաղատանձի այն ծառը, որի զովասուն սաղարթների ստվերում փռված կարպետների ու գորգերի վրա հանգստացել է Բակունցը, պարապել ժամերով ու գրել, հաճախ էլ՝ խնջույքներ արել: Ահավասիկ հիշատակման արժանի մի քանի պերճախոս տողեր Մ. Ասլամազյանի «Կյանքիս դավթար»-ից.

«Մի անգամ Գիշոկը (Բակունցի փոքր եղբայրը.— *Ս. Մ.*) եկավ մեզ մոտ սովորականից շուտ: Ակսելն էր ասել, որ թողնենք ամեն ինչ եւ շտապենք նրա մոտ: Բակ մտնելով՝ բոլորս մնացինք զարմացած. չորս կողմը հյուրեր: Սեղանի գլխամասում Ակսելն էր. նա թամադա էր: Մոտեցավ մեզ եւ ասաց. «Ես կատարում եմ Շիրվանի պատգամը: Նա ինձ պարտավորեցրել է, որ իր մահվան օրը մեծ սեղան գցեմ, հրավիրեմ նրանց, ում ես կցանկանամ, ինքս լինեմ թամադա, ու քեֆ անենք եւ հիշենք նրան առանց տխուր խոսքերի՝ որպես ընկերոջ եւ գրող Ալեքսանդր Շիրվանզադեի: Այսօր առավոտյան ես հեռագիր ստացա եւ հիմա կատարում եմ հանգուցյալի կամքը»: Այդ երեկո Ակսելն ավելի սրամիտ ու նրբախոս էր, երկար պատմում էր իր ու Շիրվանի հանդիպումների եւ արկածների մասին»:

Վ. Սարգսյանն ասաց, որ, ցավոք սրտի, այլեւս չկա այդ «պատմական» տանձենին, սակայն «մի հուսադրող փաստ. նախկին ծառի դեռեւս կենսունակ արմատից ահա այս դալար շիվն է աճում, եւ մենք հատուկ խնամք կտանենք, որ աճի, կրկին մեծ տանձենի դառնա»: Ձեռնահաս տնօրենը տնկարան է հիմնել, որով շարունակաբար կազմվացնի, կերիտասարդացնի այս նշանավոր այգին: (Ես էլ, ի դեպ, խոստացա Աշտարակի իմ այգուց այստեղ հասցնել արտասովոր խոշոր պտուղներ տվող ընկուզենու տունկ, որի «հայրը», ասում են, սերում է Հնդկաստանի նախկին պրեմիեր-մինիստր Ինդիրա Գանդիի նստավայրի այգուց...):



Գործ՝ Էդ. Իսաբեկյանի

Արեւը դեպի մայրամուտ է թեքվում: Ես տուն-թանգարանին եմ հանձնում բերածս նկարը: Հաճելի անակնկալ կար. պարզվեց՝ Վարդան Սարգսյանն արձակագիր է, եւ նա ջերմ ընծայագրով ինձ նվիրեց վերջերս Ստեփանակերտում լույս տեսած իր «Երկաթե թիթեղիկների մեղեդին» պատմվածքների գիրքը:

Այգու տաղավարում եղավ հյուրասիրություն: Թարմ լավաշ, ընկույզ ու ծաղկաբույր մեղր, մրգեր... Հյութեղ խնձորների «հեղինակն» էլ է Բակունցը: 1920-ականների կեսին գյուղատնտես Ալեքսանդր Բակունցի ներմուծած ծառերի «ժառանգներից են», որոնք պատվաստի եղանակով վաղուց ի վեր տարածվել են Գորիսում եւ շրջակայքում:

Թեյ են մատուցում Բակունցի ընտանիքի մեծ ինքնաեռից: Բուրավետ է, քանզի Գուսան Աշոտի գովերգած «ծաղկավառ Զանգեզուրի հազար տեսակ վարդերից» ու լեռնային թեյախոտերից է «առել սնունդ»:

Ես շնորհակալություն եմ հայտնում եւ հրաժեշտ տալիս մեծն Ակսել Բակունցի հիշատակը վառ պահող նվիրյալ աշխատակազմին: Հրաժեշտ եմ տալիս եւ Ակսել Բակունցի նորօրյա ոգեղեն, հայաշունչ օջախին ու բռնում վերադարձի ճանապարհը:

Քաղաքի կենտրոնում Բակունցի տպավորիչ հուշարձանն է՝ բաց գիրքը ձեռքին, քարեղեն անքթիթ հայացքը հարազատ ծննդավայրին: Գիշեր ու զօր նա իր շողշողուն Գորիսի բարգավաճումն է լռին տեսնում, քաղաք, որին երախտավոր զավակը յուրօրինակ գրական հուշարձան նվիրեց՝ անկրկնելի «Կյորես»-ը:

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 15.09.2021 թ.
Տպաքանակը՝ 1225